# ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԱՐՑԵՐԸ 1878-82ԻՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՆԹԱԽՈՐՔՈՒՄ[1]

**ՌՈԲԵՐՏ ԹԱԹՈՅԵԱՆ**
r.tatoyan@gmail.com

ՄՈՒՏՔ

Մեծ Բրիտանիան՝ որպէս Արեւելեան եւ դրան յարակից հայկական հարցերում վճռական դերակատարութիւն ունեցող մեծ տէրութիւններից մէկը, Հայկական Հարցի արծարծման գրեթէ բոլոր հիմնական հանգրուաններում կարեւորել եւ շարունակական հետաքրքրութիւն է ցուցաբերել Արեւմտեան Հայաստանի[2] ժողովրդագրութեան հարցերին: Օսմանեան կայսրութեան արեւելեան նահանգներում իր հիւպատոսներին նա յանձնարարել է մանրամասնօրէն ուսումնասիրել երկրի տեղագրութիւնն ու աշխարհագրութիւնը, բնակչութեան թուակազմը, սովորոյթներն ու տրամադրութիւնները:

Սոյն հետազօտութեան շրջանակներում կը ներկայացնենք եւ կը վերլուծենք բրիտանական դիւանագիտութեան անդրադարձը արեւմտահայութեան թուաքանակի, Արեւմտեան Հայաստանի բնակչութեան էթնիկական կազմի հարցերին՝ կենտրոնանալով Հայկական Հարցի արծարծման առաջին հանգրուանի վրայ, որը ժամանակագրական առումով ընդգրկում է Բեռլինի պայմանագրի[3] ստորագրումից անմիջապէս յետոյ ընկած ժամա-

---

[1] Ուսումնասիրութիւնն արուել է «Կողբ» հիմնադրամի (https://koghb.org/) առաջարկով՝ «Հայ-բրիտանական համաժողով» ծրագրի շրջանակներում:

[2] Հայկական Հարցի շուրջ 1878-1914ի գործընթացների առումով, Արեւմտեան Հայաստան անուանման տակ ընդունուած է հասկանալ Հայկական Լեռնաշխարհի՝ Օսմանեան կայսրութեան տիրապետութեան տակ գտնուող հատուածը, որն ըստ օսմանեան վարչական բաժանման ընդգրկուած էր այսպէս կոչուած «վեց նահանգների»՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի, Դիարբեքիրի եւ Սեբաստիայի վիլայէթների կազմում:

[3] 1878 Յուլիսի 13ին ստորագրուած Բեռլինի պայմանագրի 61րդ յօդուածի համաձայն՝ օսմանեան իշխանութիւնները պարտաւորուեցին *«առանց յետագայ յապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից յարուցուած բարելաւումներն ու բարենորոգումները»* (*Հայաստանը միջազգային դիւանագիտութեան եւ սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում (1828-1923),* կազմ.՝ Ջ. Ս. Կիրակոսեան, Ռ. Գ. Սահակեան, խմբ.՝ Ջ. Ս. Կիրակոսեան, «Հայաստան» հրատ., Երեւան, 1972, էջ 128): Պայմանագրում Արեւմտեան Հայաստանի տարածքի՝ «հայաբնակ մարզեր» ձեւակերպումից ելնելով՝ արեւ-

նակաշրջանը (1878-82), երբ Բրիտանիայի արտաքին գերատեսչութիւնը Հայկական Հարցում ստանձնել էր յատկապէս մեծ, շատ առումներով նոյնիսկ առանցքային դեր:

## ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՒԱՆԱԳԷՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆԱԽՔԱՆ 1878Ը

Օսմանեան կայսրութեան արեւելեան նահանգները Բրիտանիայի արտաքին քաղաքականութեան ուշադրութեան ոլորտում յայտնուեցին յատկապէս 1853-56ին, Ղրիմի պատերազմից յետոյ: Բրիտանական դիւանագիտութիւնը առաջին հերթին կարեւորում էր Արեւմտեան Հայաստանի տարածքի՝ որպէս Միջին Արեւելք-Կենտրոնական Ասիա տարածքում եւ դրան մաս կազմող Օսմանեան կայսրութիւնում Բրիտանիայի հիմնական մրցակից՝ Ռուսաստանի սահմանակից ռազմավարական երկրամաս:

Յատկապէս 1860-70ականներին Բրիտանիան Օսմանեան կայսրութիւնը դիտարկում էր որպէս դէպի հարաւ՝ Հնդկական ովկիանոս Ռուսաստանի ծաւալապաշտական նկրտումների դէմ պատուարներից մէկը եւ, դրանից ելնելով, Օսմանեան կայսրութիւնում բրիտանացի դիւանագիտական ներկայացուցիչները շեշտում էին Հայաստանի ռազմավարական կարեւորութիւնը՝ պնդելով, որ ոչ մի պարագայում չպէտք է թոյլ տալ, որ այն ամբողջապէս անցնի ռուսների ձեռքը: Ենթադրւում էր, որ Հայաստանի եւ քրդական լեռների վրայ իշխանութիւն ունենալով՝ Ռուսաստանը կը կարողանայ սպառնալ Պարսից ծոցին, Հնդկաստանին եւ Աֆրիկէում՝ բրիտանական տիրոյթներին[4]:

Պոլսում Բրիտանիայի դեսպանից բացի, այդ երկրի մերձարեւելեան քաղաքականութիւնը իրականացնում էին նաեւ Օսմանեան կայսրութեան նահանգներում գործող հիւպատոսները: Այս պաշտօններում, որպէս կանոն, նշանակւում էին գործունեայ եւ կարող գործիչներ, որոնք շատ դէպքերում ձեռք էին բերում զգալի հեղինակութիւն եւ ազդեցութիւն[5]:

Արեւմտեան Հայաստանի տարածքում Բրիտանիայի առաջին կանոնաւոր գործող հիւպատոսական ծառայութիւնը հիմնւում է 1836ին Էրզրումում (հիւպատոս՝ Ջէյմս Բռանթ)[6]: 1852ին բրիտանական հիւպատոսութիւն է

---

մտահայրութեան թուաքանակի, Արեւմտեան Հայաստանի բնակչութեան էթնիկ կազմի հարցերն աձանցուեցին Հայկական Հարցին՝ դառնալով դրա բաղադրիչը:

4 Akaby Nassibian, *Britain and the Armenian Question, 1915-1923*, St. Martin's Press, New York, 1984, էջ 5:

5 Ա. Ջ. Կիրակոսեան, *Բրիտանական դիւանագիտութիւնը եւ արեւմտահայութեան խնդիրը*, Երեւան, 1999, էջ 28:

6 Տե՛ս՝ Ahmet Dönmez, "The Role of James Brant in the Process of Structural Changes in British Consulates," *Adalya, the Annual of Koç University Suna & İnan Kiraç Research Center for Mediterranean Civilizations*, Istanbul, 22:2019, էջ 371:

բացւում Դիարբեքիրում[7]: 1860ականներին Էրզրումի եւ Դիարբեքիրի հիւպատոսութիւնները միաժամանակ միաւորւում են՝ գործելով «Քուրդիստանի հիւպատոսութիւն» անուան տակ (հիւպատոս՝ Ջոն Թէյլըր)[8]:

Հիւպատոսները պարբերաբար ճանապարհորդում էին Արեւմտեան Հայաստանի տարածքով՝ այդ ընթացքում հաւաքուած տուեալները ներկայացնելով արտգործնախարարութիւն ուղարկուող զեկուցագրերում, ինչպէս նաեւ բրիտանական գիտական պարբերականներում:

Արեւմտեան Հայաստանի նորաստեղծ հիւպատոսութիւններից ստացուող զեկուցագրերում հենց սկզբից կարեւոր տեղ էր յատկացուած տարածքի ազգաբնակչութեան վիճակագրութեանը: Այսպէս, Էրզրումում Բրիտանիայի հիւպատոս Ռոբըրտ Դելիէլը[9] 1865 Մարտին ներկայացնում է Էրզրումի կամ «Էրմենիստանի»[10] նահանգի բնակչութեան թուաքանակի մասին մանրամասն տուեալներ՝ ըստ առանձին վարչատարածքային ենթամիաւորների (սանջակ/գաւառ), կազա/գաւառակ եւ նահիէ/գիւղախումբ): Համաձայն հիւպատոսի տուեալների՝ նահանգում ապրում էր 1,200,814 մարդ, որից 791,746ը իսլամ էին, իսկ 409,068ը կամ ընդհանուր բնակչութեան մօտ 32%ը՝ քրիստոնեայ (այդ ժամանակ նահանգի կազմի մէջ էին

[7] David Wilson, *"List of British Consular Officials in the Ottoman Empire and its Former Territories from the Sixteenth Century to about 1860,"* The Levantine Heritage Foundation, July 2011, էջ 19, http://www.levantineheritage.com/pdf/List_of_British_Consular_Officials_Turkey(1581-1860)-D_Wilson.pdf, մատչում՝ 27 Յունիս 2022:

[8] Նոյն: Դիւանագիտական պաշտօններ զբաղեցնելը Թէյլըրը համատեղել է հնագիտական աշխատանքների հետ՝ ինչպէս տարբեր հնագիտական արշաւախմբերի կազմում, այնպէս էլ ինքնուրոյն իրականացնելով Միջագետքում շումերական եւ ասորեստանեան տարբեր հնավայրերի պեղումներ (https://www.britishmuseum.org/collection/term/BIOG63058, մատչում՝ 08 Հոկտեմբեր 2022):

[9] Պաշտօնավարել է 1859-65ին:

[10] Էրզրումի նահանգի համար «Էրմենիստան»-Հայաստան անուանումը օսմանեան պաշտօնական գրագրութիւնում օգտագործւում էր մինչեւ 1860ականների կէսերը (Herve Georgelin, "Perception of the Other's Ill-Fate: What Greek Orthodox Refugees from the Ottoman Empire Reported about the Destruction of Ottoman Armenians," in *Late Ottoman Genocides: The Dissolution of the Ottoman Empire and Young Turkish Population and Extermination Policies*, edited by Dominik J. Schaller, Jürgen Zimmerer, Routledge, New York, 2009, էջ 54): Օսմանեան կայսրութիւնում բրիտանացի դիւանագէտները, հետեւելով ընդունուած կարգի, մինչեւ 1878ին Հայկական Հարցի միջազգային դիւանագիտութեան օրակարգ մտնելը Արեւմտեան Հայաստանի հիւսիսային շրջանների համար նոյնպէս օգտագործել են Հայաստան - Արմենիա (Armenia) անուանումները:

մտնում, բացի Էրզրումից, նաեւ ապագայ Բիթլիսի եւ Վանի նահանգներից որոշ տարածքներ)[11]:

1860ականների երկրորդ կէսին Արեւմտեան Հայաստանի շրջաններով պարբերաբար ճանապարհորդել է «Քուրդիստանի» հիւպատոս Թէյլըրը: Արտգործնախարար կոմս Քլարենդոնին 1869 Մարտի 18ին հասցէագրած ընդարձակ տեղեկագիրը, որում ամփոփուած են նրա 1868-69ի ճանապարհորդութեան արդիւնքները, Արեւմտեան Հայաստանի բնակչութեան թուաքանակի վերաբերեալ վիճակագրական առատ նիւթ է պարունակում: Ինչպէս հաղորդում է բրիտանացի հիւպատոսը, ռուս-թուրքական սահմանի եւ Եփրատ գետի միջեւ ողջ երկայնքով ձգուող հարուստ հարթավայրերում, բացառութեամբ Դերսիմի[12], բնակչութեան մեծ մասը հայ էր. *«Այդ ընդարձակ տարածութեան վրայ հայերը իւրացրել են ամբողջ գիւղատնտեսութիւնը եւ առեւտուրը, իսկ քաղաքներում նրանց ձեռքերում է գտնւում դրամագլխի եւ առեւտրի երեք քառորդը»*[13]:

Թէյլըրը վիճակագրական տուեալներ է հաղորդում Արեւմտեան Հայաստանի տարածքի գրեթէ իւրաքանչիւր մանր վարչատարածքային ենթամիաւորից: Այդ վիճակագրութիւնների կարեւոր եւ արժէքաւոր առանձնայատկութիւններից է այն, որ իսլամ բնակչութիւնը բաշխուած է ըստ էթնիկ խմբերի. առանձին տրուած են քրդերի, թուրքերի, ղզլբաշների, արաբների եւ չերքէզների[14] թուաքանակի տուեալներ: Ըստ Թէյլըրի հաշուարկի՝ հիւպատոսութեան տարածքի (Էրզրում-Վան-Բիթլիս-Դիարբեքիր-Խարբերդ) ընդհանուր բնակչութեան թիւը 2,314,200 էր, որից թուրքեր՝ 442,500, քրդեր՝ 848,000, քրիստոնեաներ՝ 649,000, ղզլբաշներ՝ 200,500 եւն.: Այսինքն, քրիստոնեայ բնակչութիւնը ընդհանուր բնակչութեան մօտ 28% էր:

---

[11] Commercial Reports Received at the Foreign Office from Her Majesty's Consuls, Printed by Harrison and Sons, London, 1865, էջ 453-55. նաեւ՝ *Турецкая имперія (Изъ военно-статистическаго сборника на 1868 г.)*, подъ ред. Н.Н. Обручева [Թուրքական կայսրութիւն (1868ի ռազմական-վիճակագրական ժողովածոյից), Ն. Ն. Օբրուչեւի խմբագրութեամբ], Սանկտ-Պետերբուրգ, Военная тип. Гл. Штаба [Գլխաւոր շտաբի զինուորական տպարան], 1868, էջ 207-10:

[12] Դերսիմը գտնուել է Թէյլըրի յատուկ հետաքրքրութեան կենտրոնում: Այդ երկրամասին անդրադարձ կայ դեռեւս 1866ի ճանապարհորդութեան օրամատեանում (J. G. Taylor, "Journal of a Tour in Armenia, Kurdistan, and Upper Mesopotamia, with Notes of Researches in the Dersim Dagh, in 1866," *The Journal of the Royal Geographical Society of London,* 38:1868, էջ 281-361):

[13] *British Documents on Ottoman Armenians, volume I (1856-1880),* edited by Bilal N. Şimşir, Türk Tarih kurumu, Ankara, 1982, էջ 66:

[14] Չերքէզները զանգուածաբար Արեւմտեան Հայաստան եւ Օսմանեան կայսրութեան այլ տարածքներ են տեղափոխուել 1817-64ին՝ Կովկասեան պատերազմի հետեւանքով, Ռուսաստանի կողմից Կովկասը նուաճելուց յետոյ:

Մեկնաբանելով այս թուերը՝ Թէյլըրը նշում է հետեւեալը. *«Այսպիսով կարելի է փեսնել, որ էրզրումի վիլայէթում քրիսփոնեաները [թուով] գերազանցում են քրդերին, վերջիններս էլ՝ թուրքերին: Քրդերն իրենց թուով առաջ են անցնում թուրքերից նաեւ Դիարբեքիրի վիլայէթում: Այս էթնիկ խմբերից իւրաքանչիւրը ենթակայ է բազմաթիւ ենթաբաժանումների, ինչն արդիւնք է հարաւային նահանգներից ներգաղթի, փարբեր ծագման, դաւանանքի եւ զբաղմունքի, ինչը դրոշմել է նրանց փարբեր ազգութիւններին յափուկ ակնյայփ առանձնայափկութիւններով, թէեւ նրանք ենթակայ են մէկ կառավարութեանը եւ դարեր շարունակ ապրում են նոյն երկրում»*[15]:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԵՌԼԻՆԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ՝ ԲԵՆՋԱՄԻՆ ԴԻԶՐԱՅԷԼԻԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1878-1880 ԳԱՐՈՒՆ)

1877-78՝ ռուս-թուրքական պատերազմում Օսմանեան կայսրութեան պարտութիւնից յետոյ, պատերազմի արդիւնքների վերանայման ուղղութեամբ բրիտանական դիւանագիտութեան ջանքերի ընդհանուր յաջողութեամբ պայմանաւորուած՝ Բրիտանիայի ազդեցութիւնը Օսմանեան կայսրութեան նկատմամբ առժամանակ էապէս աճում է[16]: Բրիտանիայի վարչապետ Բենջամին Դիզրայէլիի պահպանողական կառավարութեան (1874 Փետրուար–1880 Ապրիլ) արտաքին քաղաքականութեան հիմնական նպատակներից մէկն է դառնում այդ ազդեցութեան է՛լ աւելի ամրապնդելն ու ընդարձակելը, յատկապէս Օսմանեան կայսրութեան՝ Ռուսաստանին սահմանակից վիլայէթներում: Դիզրայէլիի կառավարութիւնը Բեռլինի պայմանագրի 61րդ յօդուածով նախատեսուած հայկական բարեփոխումները դիտարկում էր Օսմանեան կայսրութեան արդիականացման եւ դրա միջոցով Ռուսաստանի ծաւալապաշտական նկրտումները զսպելու ենթախորքում, ուստի այդ հարցում սկսում է վարել նախաձեռնող քաղաքականութիւն: Բրիտանիան դրա համար տիրապետում էր բաւարար դիւանագիտական լծակների, քանի որ 1878 Յունիսի 4ին իր եւ Օսմանեան կայսրութեան միջեւ ստորագրուած Կիպրոսի համաձայնագրով նա հնարաւորութիւն էր ստացել, շրջանցելով միւս մեծ տէրութիւնները, Արեւմտեան Հայաստանում բարենորոգումների հարցով ուղղակի ճնշում գործադրել օսմանեան կառավարութեան վրայ[17]:

---

[15] *British Documents on Ottoman Armenians, volume I*, էջ 61:

[16] Նշուածը քաջ գիտակցում էին հենց իրենք՝ բրիտանական կառավարութեան անդամները (Բրիտանիայի արտգործնախարար Սոլզբըրիի 1878 Սեպտեմբերի 18ով թուագրուած նամակը Պոլսում բրիտանական դեսպան Հենրի Լայարդին (Lady Gwendolen Cecil, *Life of Robert, Marquis of Salisbury, vol. II. 1868-1880*, Hodder and Stoughton, London, 1921, էջ 315):

[17] Կիպրոսի պայմանագրով Մեծ Բրիտանիան պարտաւորում էր զէնքի ուժով պաշտպանել Օսմանեան կայսրութեան ասիական տիրոյթները Ռուսաստանի ո-

Նշուած քաղաքականութեան իրականացման տրամաբանութիւնը նախ պահանջում էր ընդարձակել Արեւմտեան Հայաստանում եւ Փոքր Ասիայում բրիտանական ռազմադիւանագիտական ներկայութիւնը: Ուստի՝ Դիզրայէլիի կառավարութիւնում Բրիտանիայի արտգործնախարար (1878 Ապրիլ-1880 Ապրիլ) Ռոբըրտ Սոլզբըրիի նախաձեռնութեամբ 1878ի վերջերին-1879ի սկզբներին Օսմանեան կայսրութեան ասիական նահանգներում բրիտանական հիւպատոսական ցանցը էապէս ընդլայնւում է: Ստեղծւում են երկու՝ «Քուրդիստանի» եւ «Անատոլիայի» գլխաւոր հիւպատոսութիւնների պաշտոններ, ինչպէս նաեւ դրանց ենթակայ վեց փոխհիւպատոսութիւններ, ընդհանուրը՝ ութ հիւպատոսական եւ փոխհիւպատոսական ծառայութիւններ:

«Քուրդիստանի» գլխաւոր հիւպատոսութեան պատասխանատուութեան տարածքն ընդգրկում էր Արեւմտեան Հայաստանի Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի եւ Խարբերդի վիլայէթները: «Անատոլիայի» գլխաւոր հիւպատոսութեան շրջանում ներառուած էին Արեւմտեան Հայաստանի Սեբաստիայի նահանգը եւ Փոքր Ասիայի բոլոր նահանգները:

Հիւպատոսական եւ փոխհիւպատոսական պաշտօններում նշանակւում են սպայական կոչում ունեցող զինուորականներ: «Քուրդիստանի» գլխաւոր հիւպատոս է նշանակւում հազարապետ Հենրի Թրոտէրը (նստավայրը՝ Դիարբեքիր), որը վայելում էր բրիտանական կառավարութեան վստահութիւնը նաեւ որպէս վիճակագիր[18]: Թրոտէրի ենթակայութեամբ գործում էին երկու փոխհիւպատոսներ՝ հրամանատար Էմիլիուս Քլէյթընը (նստավայրը՝ Վան) եւ հրամանատար Ուիլիըմ Էւըրէթը (նստավայրը՝ Էրզրում):

Փոքր Ասիայում Բրիտանիայի գլխաւոր հիւպատոսի պաշտօնը ստանձնում է գնդապետ Չարլզ Ուիլսընը (նստավայրը՝ Սեբաստիա): Նրա ենթա-

---

տնձգութիւններից, իսկ օսմանեան կառավարութիւնն ի պատասխան «խոստանում էր» մտցնել այդ շրջաններում անհրաժեշտ բարենորոգումներ, որոնք *«պիտի մանրամասնաբար որոշուեն երկու պետութիւնների միջեւ, եւ որոնք նպատակ ունեն Դռան քրիստոնեայ եւ այլ հպատակների բարուօք կառավարումը եւ պաշտպանութիւնը խնդրոյ առարկայ եղած երկրներում»* ("the Sultan promises to England to introduce necessary reforms, to be agreed upon later between the two Powers, into the Government and for the protection of the Christian and other subjects of the Porte in those territories.") (Լէօ, *Հայոց հարցի վաւերագրերը*, տպ. Ն. Աղանեանց, Թիֆլիս, 1915, էջ 104. անգլերէն բնագիրը տե՛ս՝ *Handbooks Prepared Under the Direction of the Historical Section of the Foreign Office, no. 65. Cyprus*, H. M. Stationery Office, London, 1920, էջ 67): Օսմանեան կայսրութեան պահպանութեան պարտաւորութեան կատարման համար հարկաւոր եղած միջոցների ապահովման նպատակով Բրիտանիայի ուղղակի կառավարման տակ էր անցնում Կիպրոս կղզին, ինչից եւ համաձայնագիրը ստացել է իր անունը:

[18] K. Karpat, *Ottoman Population 1830-1914: Demographic and Social Characteristics*, The University of Wisconsin Press, Wisconsin, 1985, էջ 52:

կայութեան էին գործում հրամանատար Հ. Կուպըրը (յետագայում նրան փոխարինել է տեղակալ Ֆ. Բենէթը, նստավայրը՝ Կեսարիա), հրամանատար Զ. Ստիւըրթը (նստավայրը՝ Գոնիա), տեղակալ Հ. Չերմսայդը (նստավայրը՝ Այդին), տեղակալ Հ. Քիչընըրը (յետագայում նրան փոխարինել է հազարապետ Զ. Պիքթոն-Վարլոուն, նստավայրը՝ Կաստամունի)[19]:

Նորանշանակ հիւպատոսներին եւ փոխհիւպատոսներին յանձնարարւում է մանրամասն ուսումնասիրել իրենց պատասխանատուութեան գօտու շրջանների վարչական կացութիւնը, տեղեկագրել զեղումներն ու անկարգութիւնները եւ այդ մասին յայտնել թէ՛ արտգործնախարարութեանը եւ թէ՛ Պոլսում Բրիտանիայի դեսպան Հենրի Լայարդին[20] (պաշտօնավարել է 1877-80 Մայիս)՝ օսմանեան կառավարութեանը համապատասխան դիմումներ եւ միջնորդութիւններ ներկայացնելու համար[21]: Բարեփոխումների հարցի հետապնդման առումով ի սկզբանէ նաեւ մեծ տեղ է յատկացւում Արեւմտեան Հայաստանի ժողովրդագրական պատկերի՝ երկրի տեղագրութեան ու աշխարհագրութեան, ազգաբնակչութեան թուակազմի, սովորոյթների եւ տրամադրութիւնների ուսումնասիրութեանը: Տեղի բնակչութեան վիճակագրական տուեալները կենտրոնացնելու եւ վերլուծելու գործը ի պաշտօնէ ստանձնում են Թրոտըրը եւ Ուիլսընը:

Բրիտանացի հիւպատոսներն ու փոխհիւպատոսները նշանակումից գրեթէ անմիջապէս ետք սկսում են Օսմանեան կայսրութեան արեւելեան հայաբնակ նահանգների բնակչութեան թուաքանակը վիճակագրել: Առաջին իսկ տուեալների ստացումից յետոյ նրանք սկսում են արձանագրել, որ օսմանեան պաշտօնական վիճակագրութիւնը չի արտացոլում Արեւմտեան Հայաստանի ժողովրդագրական առարկայական պատկերը. հայերը ու այլ քրիստոնեայ էթնիկ խմբերը թերհաշուառուած են: 1879 Յուլիսի 15ի զեկուցագրում Թրոտըրը, ներկայացնելով Էրզրումի եւ Վանի վիլայէթների օսմանեան վիճակագրական տուեալները, որոնց համաձայն Էրզրումի արական սեռի իսլամ բնակչութեան թիւը՝ 197,768 եւ քրիստոնեաներինը 55,043 շունչ էր, իսկ Վանի գաւառում համապատասխանաբար՝ 126,208 եւ 97,555, նշում է հետեւեալը. *«Թուրքական տուեալների մասով ես լաւ հիմքեր ունեմ*

---

[19] Sir Charles Moore Watson, *The Life of Major-General Sir Charles William Wilson*, John Murray, London, 1909, էջ 108. նաեւ՝ A. O. Sarkissian, *History of the Armenian Question to 1885*, University of Illinois press, Urbana, Illinois, 1938, էջ 98:

[20] Լայարդը նաեւ յայտնի է որպէս հնագէտ. նա պեղել է Ասորեստանի մայրաքաղաք Նինուէն:

[21] Լէօ, *Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հտր. Ա.*, տպ. Պահրի եղբարց, Փարիզ, 1934, էջ 107: Բրիտանացի նորանշանակ հիւպատոսների ու փոխհիւպատոսների պարտականութիւնների մաս էր կազմում նաեւ սահմանին ռուսական գործունէութեանը հետեւելը (G. R. Berridge, *British Diplomacy in Turkey, 1583 to the Present. A Study in the Evolution of the Resident Embassy*, Martinus Nijhoff Publishers, Leiden, 2009, էջ 89):

*ենթադրելու, որ 40%ով քրիստոնեաների թուի աւելացումը կարող է փալ ցուցանիշ, որը մօտ կը լինի իրականութեանը»*[22]:

Քլայթընին հասցէագրուած 1879 Յուլիսի 24ի նամակում Թրոտըրը կարեւորում է տեղի բնակչութեան՝ քոչուոր ու նստակեաց քրդերի եւ հայերի թուաքանակի վերաբերեալ ճշգրիտ վիճակագրական տուեալների հաւաքման խնդիրը: Նրա կարծիքով թուրքական կառավարութեան տուեալները շատ թերի էին եւ հաւատ չէին ներշնչում: Որպէս օրինակ նա նշում է, որ, ըստ օսմանեան պաշտօնական տուեալների՝ Մուշի գաւառի արական սեռի հայերի թիւը 48,000 էր, իսկ համաձայն տեղի հայ հոգեւորականութեան՝ 120,000[23]: Արտգործնախարար Սոլզբըրիին հասցէագրուած 1879 Օգոստոսի 8ի զեկուցագրում Թրոտըրը ներկայացնում է Էրզրումի վիլայէթի ժողովրդագրական պատկերը՝ ըստ հայկական տուեալների. նահանգում կար 195,500 քրիստոնեայ, 185,000 թուրք եւ 112,500 նստակեաց ու քոչուոր քուրդ ազգաբնակչութիւն[24]:

## ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՈՒԻԼԻԸՄ ԳԼԱԴՍՏՈՆԻ՝ ՎԱՐՉԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1880ի գարնանը Բրիտանիայում կայացած խորհրդարանական ընտրութիւններով իշխանութիւնն անցնում է ազատական կուսակցութեանը՝ Ուիլիըմ Գլադստոնի գլխաւորութեամբ (1880 Ապրիլ–1885 Յունիս): Նոր կառավարութիւնը որոշ չափով վերանայում է հայկական բարեփոխումների հետապնդման ուղղութեամբ բրիտանական քաղաքականութիւնը: Եթէ Դիզրայէլին եւ Սոլզբըրին կարեւորում էին բարեփոխումների հարցում օսմանեան կառավարութեան հետ ուղղակի-երկկողմ հաղորդակցութիւնն ու շփումները (իդէպ, այդ հաղորդակցութեան արդիւնքները առաւել քան համեստ էին՝ օսմանեան կառավարութիւնը խուսանաւումների եւ ձգձգումների միջոցով հետեւողականօրէն հրաժարւում էր տեղերում վիճակը բարելաւելու ուղղութեամբ բրիտանական միջնորդութեամբ գործուն լիազօրութիւններով օժտուած եւրոպացի պաշտօնեաների նշանակումներին եւ այլ բարեփոխումների իրականացումից՝ երկիւղ կրելով, որ բարեփոխումները յանգեցնելու են Արեւմտեան Հայաստանում եւ Փոքր Ասիայում բրիտանական փաստացի հովանաւորութեան հաստատմանը[25]), ապա Գլա-

---

[22] *British Documents on Ottoman Armenians, vol. I*, էջ 484:

[23] Կիրակոսեան, *Բրիտանական դիւանագիտութիւնը*, էջ 137:

[24] *British Documents on Ottoman Armenians, vol. I*, էջ 517:

[25] Dwight E. Lee, *Great Britain and the Cyprus Convention Policy of 1878*, Harvard University Press, Cambridge, Massachusetts, 1934, էջ 159-60: Արեւմտեան Հայաստանում եւ Փոքր Ասիայում բարեփոխումների իրականացման ուղղութեամբ Դիզրայէլիի կառավարութեան ջանքերի ձախողման մասին մանրամասն տե՛ս նաեւ՝

դստոնը փորձում է շեշտը դնել Բեռլինի պայմանագրի երաշխաւոր բոլոր մեծ տէրութիւնների միասնական գործողութիւնների իրականացման վրայ[26]: Դրան համաձայն՝ 1880 Մայիսին Պոլսում Բրիտանիայի դեսպան Լայարդին փոխարինած Ջորջ Գոշէնին յանձնարարւում է ուժեղացնել ճնշումները օսմանեան կառավարութեան վրայ՝ *«պարզորոշ կերպով փոխանցելով սուլթանին եւ [Բարձր] Դռանը, որ Թուրքական կայսրութեան պահպանման միակ յոյսը նրա վարչակազմի՝ ինչպէս մայրաքաղաքում, այնպէս էլ նահանգներում հիմնովին եւ մանրազնին բարեփոխուելն է»*[27]:

Բրիտանիայի նախաձեռնութեամբ 1880 Յունիսի 11ին մեծ տէրութիւնները նոյնաբովանդակ յուշագիր են ուղարկում օսմանեան կառավարութեանը՝ Բեռլինի պայմանագրով ստանձնած բոլոր պարտաւորութիւնները կատարելու պահանջով: Յուշագրի երրորդ կէտը վերաբերում էր Արեւմտեան Հայաստանում բարեփոխումներին: Մեծ տէրութիւնները օսմանեան իշխանութիւններից պահանջում էին լիարժէք եւ անյապաղ կատարել Բեռլինի պայմանագրի 61րդ յօդուածը՝ զուգահեռաբար ներկայացնելով այն քայլերը, որոնք այդ ուղղութեամբ ձեռնարկուել են[28]:

Նոյն թուականի Յուլիսի 5ին Օսմանեան կայսրութեան արտաքին գործերի նախարար Աբեդին փաշան, դեսպանների համատեղ յուշագրին ի

W. N. Medlicott, *Congress of Berlin and After*, Frank Cass & Co., London, 1963, 2nd edition, էջ 290-346, 383:

26 Գլադստոնն ու նրա կառավարութեան անդամները 1878ի Կիպրոսի պայմանագիրը բնութագրում էին որպէս «խելացնոր դաշնադրութիւն» (“insane covenant”), որը Բրիտանիային ոչ ուղղակի կերպով պատասխանատու է դարձնում Հայաստանում թուրքական տիրապետութեան բնոյթի համար եւ ստիպում ստանձնել ինչպէս Ռուսաստանի դէմ, այնպէս էլ յօգուտ Հայաստանի այնպիսի պարտաւորութիւններ, որոնք նա ի վիճակի չէ կատարելու (Gertrude M. Tuckwell, *The Life of the Rt. Hon. Sir Charles W. Dilke, vol. I*, John Murray, Albemarle Street, London, 1917, էջ 327): Դրանից ելնելով՝ Գլադստոնի կառավարութեան նպատակն է դառնում Բեռլինի պայմանագրի կէտերից շատերի կատարմանը դիմադրող օսմանեան կառավարութեան վրայ ճնշում գործադրելու ուղղութեամբ բոլոր մեծ տէրութիւնների համատեղ գործողութիւնները՝ այսպէս կոչուած «եւրոպական *կոնցերտը*» վերակենդանացնելու հիմքեր ստեղծելը (W. N. Medlicott, “The Gladstone Government and the Cyprus Convention, 1880-85,” *The Journal of Modern History*, 2(12):1940, էջ 187):

27 Thomas J. Spinner, *George Joachim Goschen: The Transformation of a Victorian Liberal*, Cambridge University Press, New York, 1973, էջ 68:

28 Յուշագրի՝ Հայկական Հարցին վերաբերող հատուածը տե՛ս՝ М. Г. Роленъ-Жекменъ, «Арменія, армяне и трактаты», *Положеніе армянъ в Турции до вмешательства державъ въ 1895 году* [Մ. Գ. Ռոլէն-Ժեկմէն, «Հայաստանը, հայերը եւ պայմանագրերը», *Հայերի վիճակը Թուրքիայում նախքան պէտութիւնների միջամտութիւնը 1895ին*], Մոսկուա, типографія «Разсвѣтъ» [«Լուսաբաց» տպարան], 1896, էջ 91-2:

պատասխան, յայտարարում է, որ օսմանեան կառավարութիւնը մտադիր չէ բարեփոխումներ իրագործել յատկապէս հայ բնակչութեան համար, քանի որ հայերն Արեւմտեան Հայաստանի տարածքում փոքրամասնութիւն են. *«Վանի, Դիարբեքիրի, Բիթլիսի, Էրզրումի, Սեբաստիայի նահանգներում հայ բնակչութեան մարդահամարը փոխել է հետեւեալ արդիւնքները. հայերի թիւը կազմում է 17%, ոչ-իսլամ այլ համայնքներինը՝ 4%, իսկ իսլամները կազմում են բնակչութեան 79%ը»*՝ նշւում էր Աբեդին փաշայի պատասխանում[29]:

Աբեդին փաշայի Յուլիսի 5ի պատասխան գրութիւնը Գոշէնը ուղարկում է Բրիտանիայի արտաքին գործերի նախարար լորդ Ջորջ Գրենվիլին[30] հետեւեալ մեկնաբանութեամբ. *«Այս կապակցութեամբ հայաբնակ նահանգների բնակչութեան վիճակագրութիւնը չափազանց մեծ կարեւորութիւն է ձեռք բերում: Բարձր Դուռն իր պատասխանում կառչած է թուերի, որոնք կարելի է համարել զարմանք յարուցող»*[31]:

Իր հերթին, լորդ Գրենվիլը Աբեդին փաշայի յուշագիրը ուղարկում է Արեւմտեան Հայաստանում եւ Փոքր Ասիայում բրիտանական հիւպատոսական ցանցի ներկայացուցիչներին՝ խնդրելով կարծիք յայտնել դրանում ներկայացուած տուեալների արժանահաւատութեան մասին[32]: Բրիտանացի դիւանագէտները միանշանակ մերժում են արեւմտահայութեան թուաքանակի հարցում օսմանեան կառավարութեան վիճակագրութեան հաւաստիութիւնը: Այսպէս, Չերմսայդը՝ Գոշէնին հասցէագրած 1880 Օգոստոսի 9ի նամակում նշում է, որ օսմանեան պաշտօնական վիճակագրութիւնը *«ամենաանորոշն է ու անբաւարարը, ինչպէս եւ այն ամէնը, ինչ թուրքական կառավարութեան տնօրինութեան տակ է գտնւում»*[33]: Թրոտըրը, վերլուծելով 1880ին թուրքական կառավարութիւնից ստացած Արեւմտեան Հայաստանի վիլայէթների բնակչութեան վիճակագրական աղիւսակները, համարում է, որ Դիարբեքիրի եւ Խարբերդի («յատկապէս Խարբերդի» - ընդգծում է հիւպատոսը) քրիստոնեայ տարրը զգալիօրէն թերի է հաշւուած[34]: Նա օսմանեան վիճակագրութեան թերութիւններից առանձնացնում է նաեւ այն, որ դրանում բոլոր իսլամ ազգերը ներկայացուած են որպէս մէկ ընդհանրութիւն եւ որեւէ փորձ արուած չէ բաժանելու նրանց ըստ ազգութիւննե-

---

[29] Նոյն, էջ 94: Աբեդին փաշայի ամբողջ նամակի հայերէն թարգմանութիւնը տե՛ս՝ Լէօ, *Հայոց հարցի վաւերագրերը*, էջ 165-72:

[30] Պաշտօնավարել է 1880 Ապրիլի 28ից 1885 Յունիսի 24ը:

[31] *British Documents on Ottoman Armenians, volume II (1880-1890)*, edited by Bilal N. Şimşir, Türk Tarih kurumu, Ankara, 1989, էջ 80:

[32] Роленъ-Жекменъ, էջ 95:

[33] Karpat, էջ 53:

[34] *British Documents on Ottoman Armenians, vol. II*, էջ 128:

րի (թուրքեր, քրդեր, զազաներ, ղզլբաշներ եւն.)։ *«Թուրքական պաշտօնեաները ակնյայտ պատճառներով նրանց դասակարգում են մէկ ընդհանուր իսլամ խմբի մէջ»*՝ հաղորդում է հիւպատոսը[35]։

Արեւմտահայութիւնը ներկայացնող կառոյցը՝ Պոլսի հայոց պատրիարքարանը եւս չի ընդունում օսմանեան վիճակագրական տուեալները։ Դեռեւս 1880 Յունիսի 17ին Բրիտանիայի դեսպանի հետ զրոյցի ընթացքում պատրիարք Ներսէս Վարժապետեանն առաջարկում է բարեփոխումների ենթակայ Արեւմտեան Հայաստանի նահանգների տարածքից առանձնացնել բուն հայաբնակ տարածքները[36] եւ կազմել մէկ ընդհանուր նահանգ՝ դրա ղեկավար նշանակելով բոլոր եւրոպական մեծ տէրութիւնների կամ Բրիտանիայի կողմից երաշխաւորուած քրիստոնեայ նահանգապետի։ Պատրիարքը նշում էր, որ այդ նորաստեղծ նահանգի տարածքում քրիստոնեայ բնակչութիւնը քանակապէս գերազանցում է իսլամներին, եթէ հաշուարկից դուրս թողնուեն ոչ-նստակեաց քրդերը, որոնք այնտեղ են գտնւում տարուայ ընթացքում միայն վեց ամիս[37]։ Ի հիմնաւորումն իր ասա-

---

[35] Դրա հետ մէկտեղ, հիւպատոսը փորձում է հաւասարութեան նշան դնել այս հարցում օսմանեան իշխանութիւնների եւ Պոլսի հայոց պատրիարքարանի դիրքորոշումների միջեւ՝ աւելացնելով, որ *«նոյնքան ակնյայտ պատճառներով հայկական ինքնավարութեան սփեղծման ջափագովների շահերից է բխում բաժանել մուսուլմաններին ինչքան հնարաւոր է շափ ենթախմբերի»* (նոյն, էջ 127)։

[36] Նշուած առանձնացումը պայմանաւորուած էր այն հանգամանքով, որ այսպէս կոչուած վեց նահանգների կազմում օսմանեան կառավարութիւնն ընդգրկել էր տարածքներ, որոնք գտնւում էին Հայկական Լեռնաշխարհի սահմաններից դուրս եւ առաւելաքար քրդաբնակ ու թուրքաբնակ էին։ Ուսումնասիրողներից շատերը դրանում տեսնում են Արեւմտեան Հայաստանի տարածքի վրայ կազմուած տուեալ վարչական միաւորի ընդհանուր բնակչութեան մէջ հայերի եւ այլ քրիստոնեայ էթնիկ խմբերի տոկոսային յարաբերակցութիւնը հնարաւորինս նուազեցնելու օսմանեան իշխանութիւնների միտում (մանրամասն տե՛ս՝ Vahakn N. Dadrian, *Warrant for Genocide. Key Elements of Turko-Armenian Conflict*, New Brunswick (USA) and London (U.K.), 1999, էջ 139-44, նաեւ՝ Е.К. Саркисян, «Административная и демографическая политика Османского правительства в Западной Армении», *Страны и народы Ближнего и Среднего Востока. т. V, Турция* [Ե. Կ. Սարգսեան, «Օսմանեան կառավարութեան վարչական եւ ժողովրդագրական քաղաքականութիւնը Արեւմտեան Հայաստանում», *Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, հատոր Ե. Թուրքիա*], Հայկ. ՍՍՀ ԳԱ, Երեւան, 1970, էջ 362-63. նաեւ՝ Գ. Մ. Բադալեան, «Սուլթանական կառավարութեան վարչաժողովրդագրական քաղաքականութիւնը», *Հայոց պատմութիւն, հտր. III. նոր ժամանակաշրջան, գիրք առաջին (XVII դարի երկրորդ կէս-XIX դարի վերջ)*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, «Զանգակ-97», Երեւան, 2010), էջ 448-56. նաեւ՝ Ռ. Ա. Թաթոյեան, *Արեւմտահայութեան թուաքանակի հարցը 1878-1914 թուականներին,* Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտ, Երեւան, 2015, էջ 52-57)։

[37] *British Documents on Ottoman Armenians, vol. II*, էջ 44։

ծի՝ 1880 Յունիսի 24ին պատրիարքը Մեծ Բրիտանիայի դեսպանին է ներկայացնում պատրիարքարանի՝ 1878-80ին Արեւմտեան Հայաստանում անցկացուած մարդահամարի տուեալների հիման վրայ պատրաստած վիճակագրական աղիւսակը (տե՛ս Յաւելուած Ա.)[38]: Համաձայն պատրիարքարանի տուեալների՝ Արեւմտեան Հայաստանի առանձնացուած տարածքում՝ Վանի, Մուշի եւ Բիթլիսի գաւառներ (առանց Սղերդի), Էրզրումի նահանգ, Դիարբեքիրի նահանգի Դիարբեքիրի գաւառ, Խարբերդի նահանգի Խարբերդի եւ Արղանա-Մադէնի գաւառներ, Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գաւառ եւ Հալէպի նահանգի Մարաշի գաւառ) բնակչութեան ընդհանուր թիւը 1,831,300 էր, որից հայեր՝ 780,800 (ընդհանուր բնակչութեան 42.6%), իսկ բոլոր քրիստոնեայ ազգութիւնները միասին՝ 1,054,800 (ընդհանուր բնակչութեան 57.6%): Ի տարբերութիւն օսմանեան վիճակագրութեան, որտեղ մուսուլման բնակչութիւնը ներկայացուած էր որպէս միատարր զանգուած, պատրիարքարանի տուեալներն արտացոլում էին Արեւմտեան Հայաստանի ամբողջ էթնիկ խայտաբղետ պատկերը. առանձին տրուած էին թուրքերի, քրդերի, չերքէզների, եզդիների, ղզլբաշների, թուրքմէնների եւ իսլամադաւան այլ էթնիկ խմբերի թուերը[39]:

Պոլսի հայոց պատրիարքարանի պատրաստած վիճակագրական աղիւսակը, ինչպէս եւ նախկինում Արեւմտեան Հայաստանի հայ հոգեւորականներից ստացած տուեալները հիւպատոսների կողմից արժանանում են բարձր գնահատականի եւ ընդունւում հայ բնակչութեան թուաքանակին վերաբերող մասով: Այսպէս, Թրոտըրը Բրիտանիայի դեսպանին հասցէագրած 1881 Յուլիսի 11ի զեկուցագրում նշում է. *«Ես ուշադրութեամբ ուսումնասիրեցի պատրիարքի կողմից վերջերս ներկայացուած տուեալները եւ չգտայ դրանց մէջ ոչինչ, ինչը կարող էր ինձ պարտադրել փոխել իմ կարծիքը քրիստոնեաների եւ մուսուլմանների համեմատական թուաքանակի վերաբերեալ: Աղիւսակները կազմուած են խնամքով եւ, հաւանաբար, աւելի են մօտ իրականութեանը, քան պատրիարքարանից մինչ այդ ստացուած որեւէ վիճակագրութիւն»*: «*Իրաւ*,- եզրափակում է նա,- *տուեալները, որոնք վերաբերում են զուտ հայ բնակչութեանը, աւելի մանրամասն են եւ, գուցէ, աւելի ճշգրիտ, քան մեր տրամադրութեան տակ եղած որեւէ այլ թիւ*»[40]:

Պոլսի հայոց պատրիարքարանի վիճակագրութեան նկատմամբ Թրոտըրի վերաբերմունքի վերաբերեալ ուշագրաւ դիտարկումներ է պարունակում Ռուսաստանի արտգործնախարարի տեղակալ Նիկոլայ Գիրսին հասցէագրուած Պոլսում Ռուսաստանի դեսպան Ե. Նովիկովի՝ 1880 Օգոստոսի

[38] Նոյն, էջ 81-82:

[39] Պոլսի հայոց պատրիարքարանի՝ 1878-80ի մարդահամարի եւ դրա արդիւնքում կազմուած վիճակագրութեան մասին մանրամասն տե՛ս՝ Թաթոյեան, *Արեւմտահայութեան թուաքանակի հարցը*, էջ 78-87:

[40] *British Documents on Ottoman Armenians*, էջ 250:

21ի (Սեպտեմբերի 2) զեկուցագիրը. *«Մինչեւ վերջերս քրդերի եւ թուրքերի եռանդուն պաշտպան մայոր Թրոտըրը փոխել է իր տեսակէտը եւ ճանաչել է հայոց պատրիարքի կազմած հայ բնակչութեան վիճակագրութեան ճշգրտութիւնը՝ անգամ ճանաչելով այդ թիւն իրականից ցածր: Նա համաձայն չէ պատրիարքի հետ միայն քրդերի թուաքանակի որոշման հարցում, որոնց նա համարում է աւելի մեծաթիւ»*[41]:

1880ի ամռան բրիտանացի հիւպատոսները շարունակում են տարբեր աղբիւրներից հաւաքել Արեւմտեան Հայաստանին վերաբերող վիճակագրական տուեալներ: Օգոստոսի վերջերին Գոշէնը Պոլիս է հրաւիրում Ուիլսընին եւ Թրոտըրին՝ «արեւելեան վիլայէթներում» տիրող իրավիճակի մասին հնարաւորինս սպառիչ տեղեկատուութիւն ստանալու համար: Ի թիւս այլոց ՝ քննարկման առարկայ է դառնում նաեւ Արեւմտեան Հայաստանում բնակուող տարբեր ազգերի թուային յարաբերակցութեան հարցը: *«Գնդապետ Ուիլսընը եւ հազարապետ Թրոտըրը այժմ մանրակրկիտ ուսումնասիրում են Աբեդին փաշայի եւ հայոց պատրիարքի ներկայացրած թուերը՝ համադրելով դրանք տարբեր ժամանակներում իրենց կողմից հաւաքուած տուեալների հետ»*՝ նշում է դեսպանը արտգործնախարարին հասցէագրած 1880 Սեպտեմբերի 3ի զեկուցագրում[42]:

Ի կատարումն Գոշէնից ստացած բանաւոր առաջադրանքի՝ Թրոտըրը կազմում եւ դեսպանի ուշադրութեան է ներկայացնում Արեւմտեան Հայաստանի բնակչութեան բաղդատական աղիւսակներ՝ ըստ տարբեր աղբիւրների՝ Պոլսի հայոց պատրիարքարանի եւ տեղերում հայ հոգեւորականութեան տուեալներ, օսմանեան պաշտօնեաներից ստացուած տուեալներ եւ օսմանեան տարեգրքերից (*սալնամէ*) քաղուած տեղեկութիւններ, անհատների հաշուարկներ, ճանապարհորդութիւնների ընթացքում հաւաքուած տուեալներ եւն. (Թրոտըրի կազմած աղիւսակները տե՛ս՝ Յաւել. Բ., աղ. 2):

Բացի վերոնշեալ աղիւսակներից, 1880 Հոկտեմբերի 30ին Թրոտըրը դեսպանին է յանձնում նաեւ *«Տեղեկագիր Քուրդիստանի հիւպատոսութեան շրջաններում բնակուող տարբեր ազգութիւնների վերաբերեալ, գլխաւորապէս բարեփոխումների հարցի առնչութեամբ դիտարկուած»* վերտառութեամբ տեղեկագիրը[43]: Այս ծաւալուն փաստաթղթում Թրոտըրը

---

[41] Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), ֆ. 818, ց. 1, գ. 529, թ. 99 (բուն աղբիւրը՝ МИД РФ, Армянские дела, СПб, Главный архив ВПР, дело № 117, л. 30 [Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան Գլխաւոր Արխիւ, Սանկտ-Պետերբուրգ, ՌԴ ԱԳՆ, Հայկական գործեր, գործ № 117, թերթ 30]):

[42] *British Documents on Ottoman Armenians, vol. II*, էջ 109:

[43] *Turkey, No. 6 (1881). Further Correspondence Respecting the Condition of the Populations in Asia Minor and Syria*, London, 1881, էջ 248-60: Տեղեկագրի տուեալները ներկայացնելիս օգտուել ենք հայերէն թարգմանութիւնից, որը մաս առ մաս հրատարակուել է *Մասիս* օրաթերթում («Ժողովուրդք Արմէնոյ-Քուրդիստանի. տեղեկագիր Պ. Թրօթթըրի «վերաբերմամբ գլխաւորապէս բարենորոգմանց

ներկայացնում է «Քուրդիստանի», այն է՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի եւ Դիարբեքիրի նահանգների տարածքում բնակուող իւրաքանչիւր էթնիկ խմբի համառօտ պատմութիւնը, նիստուկացը, թիւն ու բաշխումը: Հիւպատոսն արձանագրում է, որ նշուած շրջաններում իսկապէս գոհացուցիչ կամ արժանահաւատ մարդահամարներ չեն անցկացուել, սակայն իր տրամադրութեան տակ եղած տուեալների քննութիւնը նրան թոյլ է տալիս յանգել այն եզրակացութեան, որ այնտեղ կայ մօտաւորապէս 700,000 քրիստոնեայ եւ 1,750,000 իսլամ ազգաբնակչութիւն[44]: Յաջորդիւ, Թրոտըրը նաեւ հաղորդում է տարածքում բնակուող էթնիկ խմբերից իւրաքանչիւրի մօտաւոր թուաքանակի տուեալներ. քրդեր՝ 1,000,000 (այդ թւում՝ 100,000 զազա), հայեր՝ 600,000-700,000, թուրքեր՝ 500,000, տարբեր յարանուանութիւնների ասորիներ՝ մինչեւ 83,000[45], եզդիներ՝ 20,000, յոյներ՝ 5000, չերքէզներ՝ 5000, հրեաներ՝ 1000 եւն.:

Այսպիսով, ըստ Թրոտըրի հաշուարկի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի եւ Էրզրումի նահանգներում ընդհանուր բնակչութեան թիւը մօտ 2,450,000 էր, եւ հայերն ու այլ քրիստոնեաները կազմում էին դրա մօտ մէկ երրորդը: Հիւպատոսի հաղորդած հայ բնակչութեան թուաքանակը՝ մինչեւ 700,000, շուրջ մէկուկէս անգամ գերազանցում էր նոյն տարածքի համար օսմանեան վիճակագրութեան տուեալը եւ մօտաւորապէս համապատասխանում էր Պոլսի հայոց պատրիարքարանի հաշուարկին: Հայերը նշուած տարածքում, ըստ Թրոտըրի, մօտ 200,000ով աւել էին թուրքերից եւ մօտ 300,000ով պակաս՝ քրդերից:

1880 Օգոստոսի վերջերին Գոշէնի եւ Թրոտըրի հետ հանդիպումների եւ խորհրդակցութիւնների ընթացքում Ուիլըընն առաջարկում է դեսպանին սեփական ուժերով՝ ռազմական փոխհիւպատոսների եւ իր տրամադրութեան տակ եղած այլ անձանց օգնութեամբ, երեք ամսում մօտաւոր մարդահամար անցկացնել Արեւմտեան Հայաստանի վիլայէթներում, որի միջոցով հնարաւոր կը լինէր ճշտել հրապարակի վրայ առկայ հակասական տուեալները, սակայն այդ ծրագիրը այդպէս էլ կեանքի չի կոչւում[46]:

---

խնդրոյն», *Մասիս, լրագիր հանապազօրեայ, քաղաքական, ազգային, բանասիրական եւ փնփրեսական* (Կ. Պոլիս), 1881, Սեպտեմբերի 30 (Հոկտեմբերի 12), Հոկտեմբերի 1-2-3, 5 (Հոկտեմբերի 13-14-15, 17):

[44] *Մասիս,* 1881, Սեպտեմբերի 30 (Հոկտեմբերի 12):

[45] Այդ թւում նեստորական ասորիներ՝ 53,940 (ըստ Քլայթոնի տուեալի), 74,466 (ըստ ամերիկացի բողոքական միսիոնար Քըդսի տուեալի), քաղդէական ասորիներ՝ 6000, յակոբիկեան ասորիներ՝ 2000 (*Մասիս,* 1881, Հոկտեմբերի 3 (Հոկտեմբերի 15) եւ *Մասիս,* 1881, Հոկտեմբերի 5 (Հոկտեմբերի 17):

[46] *British Documents on Ottoman Armenians, vol. II,* էջ 109: Ուիլըընը նախկինում մէկ այլ առիթով նշում էր, որ նման մարդահամարի անցկացումը կարող է մեծ ծախսեր պահանջել (նոյն, էջ 84): Հայկական բարեփոխումների կապակցութեամբ սեփա-

1880 Սեպտեմբերի 11ին բրիտանական դիւանագիտութեան նախաձեռնութեամբ մեծ տէրութիւնների դեսպանները նոր համատեղ յուշագիր են ուղարկում Բարձր Դռանը՝ ամբողջութեամբ նուիրուած Աբեդին փաշայի՝ Յուլիսի 5ի պատասխանի այն հատուածին, որը վերաբերում էր օսմանեան կառավարութեան կողմից Բեռլինի պայմանագրի 61րդ յօդուածով ստանձնած պարտաւորութիւնների կատարմանը: Յուշագրում, ի թիւս տարբեր ոլորտներում բարենորոգումների անցկացման հարցերի, դեսպանները հանգամանալից անդրադառնում են նաեւ Արեւմտեան Հայաստանի բնակչութեան թուաքանակին: Մեծ տէրութիւններն ըստ էութեան մերժում են օսմանեան վիճակագրական տուեալների հաւաստիութիւնը Արեւմտեան Հայաստանի նահանգների բնակչութեան ազգային կազմի որոշման հարցում եւ պահանջում անկողմնակալ յանձնաժողովի կողմից նոր մարդահամարի անցկացում: Ստորեւ՝ նոտայի համապատասխան հատուածն ամբողջութեամբ.

---

կան ուժերով Արեւմտեան Հայաստանում մարդահամար անցկացնելու հնարաւորութիւնը 1880ի ամռանն արծարծւում է նաեւ Բրիտանիայի խորհրդարանում: Այսպէս, 1880 Յուլիսի 23ի Լորդերի պալատի նիստին, հայկական բարեփոխումների մասին Ջէյմս Բրայսի հարցմանն ի պատասխան, արտգործնախարարի տեղակալ Չարլզ Դիլքը նշում էր, որ հայաբնակ նահանգներում իրավիճակն աւելի վատ է, քան Օսմանեան կայսրութեան այլ մասերում, եւ գրեթէ անհնարին է չափազանցել այնտեղ գերիշխող չարաշահումները եւ անիշխանութիւնը: Դիլքը ափսոսանք էր յայտնում, որ Բարձր Դուռը մեծ տէրութիւնների յուշագրին ի պատասխան մերժել է ընդունել անգլիացի հիւպատոսների զեկուցագրերի իսկութիւնը. *«Վեհափառ Թագուհւոյն կառավարութիւնը մտադիր է անմիջապէս պարտ ու պատշաճը փնտրինել որպէսզի ստուգէ Հայաստանի գաւառներու մէջ բնակող այլ եւ այլ ցեղերու ճիշտ թիւը, ոչ միայն իր յատուկ, այլ եւ Եւրոպայի միւս մեծ տէրութեանց ծանօթութեան համար: Եւրոպական պաշտօնաւորներ այս վիճակագրութիւնը պիտի ճշդեն, քանի որ կարեւոր է այն իբրեւ հիմ ապագայ բարենորոգումներու առաջարկին համար»* (*Արեւելեան մամուլ*, Օգոստոս 1880, էջ 243):
Դիլքի խոստացած եւ բրիտանական դիւանագիտական գրագրութիւնում արծարծուած մարդահամարի չանցկացուելուն արձագանգել է հայկական մամուլը: Մասնաւորապէս, *Մասիս*ը, 1881 Հոկտեմբերի 20 (Նոյեմբերի 1) համարի խմբագրականում յիշեցնելով Դիլքի խօսքերը, այնուհետեւ հռետորական հարց էր տալիս. *«Ու՞ր են սակայն «հիւպատոսաց օժանդակութեամբ կատարուելիք» վիճակագիրներն: Ինչ որ յիշեալ հաւաքածոյն* (նկատի ունի *Կապոյտ գրք*ի թողարկումը, որտեղ հաւաքուած էին Արեւմտեան Հայաստանի բնակչութեան թուաքանակի վերաբերեալ 1878-80ի հիւպատոսական հաղորդագրութիւնները – Ռ.Թ.) *կը դնէր [բրիտանական] խորհրդարանին առջեւ, ոչ այլ ինչ էր, բայց եթէ արդէն զանազան աղբիւրներէ ելած ցուցակաց բաղդատութիւն մը, որ իրօք շատ բան մը կը հասկցնէր... բայց այդ չափը Սըր Չարլզ Տիլքի խոստման համապատասխան նկատելու համար, պէտք էր որ ետքէն մի ուրիշ կարգադրութիւն եղած լինէր»* (*Մասիս*, 1881, Հոկտեմբերի 20 (Նոյեմբերի 1)):

Բարձր Դուռը ձգտում է նուազեցնել այդ պարբերութեան (Բեռլինի պայմանագրի 61րդ յօդուածի – Ռ.Թ.) նշանակութիւնը՝ վկայակոչելով ինչպէս հայ, այնպէս էլ քրիստոնեայ բնակչութեան թիւը՝ համեմատած ամբողջ ժողովրդի ընդհանուր թուի հետ: Նոտային կից ներկայացուած աղիւսակն[47] այն աստիճանի է տարբերւում միւս բոլոր տուեալներից, որ տէրութիւնները չեն կարող այն ճշգրիտ ճանաչել:
Հայոց պատրիարքի տրամադրած կից զետեղուող բնակչութեան վիճակագրութիւնը ցոյց է տալիս այն մեծ տարբերութիւնը, որը գոյութիւն ունի տարբեր տուեալների միջեւ: Յուլիսի 5ի նոտան միայն տալիս է մահմեդական եւ քրիստոնեայ բնակչութեան յարաբերակցութիւնը: Տէրութիւնները կը ցանկանային իմանալ այն հիմքը, որի վրայ կատարուել են հաշուարկները: Նրանք կարեւոր են համարում 61րդ յօդուածով նկատի առնուած նահանգներում բնակուող քրիստոնեաների եւ մահմեդականների համապատասխան թուաքանակների մօտաւոր մարդահամարի անցկացումը հնարաւորինս կարճ ժամկէտերում անկողմնակալ յանձնաժողովի կողմից, որի կազմը կ'որոշուի յետագայում:
Պէտք է հասկանալի լինի, որ Բարձր Դուռը կ'ընդունի մարդահամարի արդիւնքները՝ արուած այն պայմաններում, որոնք կ'երաշխաւորեն դրա լիակատար անկողմնակալ բնոյթը եւ, համապատասխանաբար, դրանք հաշուի կ'առնի նահանգների կազմակերպման ժամանակ: Շատ հաւանական է, որ տեղական բոլոր պահանջմունքները բաւարարելու համար անհրաժեշտ կը լինի վերանայել տարբեր վիլայէթների ներկայ աշխարհագրական սահմանները[48]:

Համատեղ նոտային կից մեծ տէրութիւնների դեսպանները զետեղում են Պոլսի հայոց պատրիարքարանից ստացած վիճակագրական աղիւսակը՝ դրանով այն հակադրելով օսմանեան կառավարութեան տուեալներին եւ ըստ էութեան ակնարկելով, որ պատրիարքարանի տուեալներն իրենք եթէ օսմանեան տուեալներից ոչ աւելի, ապա առնուազն ոչ նուազ արժանահաւատ են համարում:

Ի պատասխան մեծ տէրութիւնների համատեղ նոտայի՝ Բարձր Դուռը 1880 Հոկտեմբերի 3ին ներկայացնում է հայկական բարենորոգումների սեփական ծրագիրը, որը քիչ աղերս ունէր մեծ տէրութիւնների առաջարկների հետ եւ կոչուած էր յետագայ խուսանաւումների եւ ձգձգումների միջոցով խուսափել Բեռլինի պայմանագրի 61րդ յօդուածով ստանձնած պարտաւո-

---

[47] Խօսքը վերաբերում է օսմանեան կառավարութեան վիճակագրական տուեալները պարունակող աղիւսակին:

[48] *Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում: Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու*, խմբ.՝ Մ. Ներսիսեան, կազմ.՝ Մ. Գ. Ներսիսեան, Ռ. Գ. Սահակեան, «Հայաստան» հրատ., Երեւան, 1991, էջ 7-13). նաեւ՝ *Մեղու Հայաստանի,* 1881, Օգոստոսի 22:

րութիւնների կատարումից: Մարդահամարի անցկացման պահանջը կատարեալ լռութեան էր մատնւում եւ արհամարհւում էր[49]:

Գոշէնը, ստանալով Բարձր Դռան Հոկտեմբերի 3ի պատասխանը, այն բնութագրում է որպէս յանդուգն[50]: Սակայն այս պատասխանին մեծ տէրութիւնների որեւէ գրաւոր արձագանգ չի հետեւում. Հայկական Հարցում օսմանեան կառավարութեան խուսափողական դիրքորոշմանը հակադարձող այլ գործնական քայլեր նոյնպէս չեն ձեռնարկւում: Արեւմտեան Հայաստանում Բրիտանիայի հիւպատոսներին մնում էր միայն արձանագրել, որ օսմանեան իշխանութիւնների կողմից անցկացուող բարեփոխումները «կատարեալ ֆարս են»: *«Մուսուլման եւ քրիստոնեայ բնակչութեան թուաքանակը, որի հիման վրայ պէտք է որոշուի կառավարող փարրը, ամբողջովին խեղաթիւրուած է»*՝ մասնաւորապէս նշւում էր հազարապետ Թրոտըրին ուղղուած հրամանատար Քլայթոնի՝ 1880 Նոյեմբերի 16ի զեկուցագրում[51]: Օսմանեան կառավարութիւնը տեղական կառավարող օղակները «բարեփոխելիս» յենւում էր բացառապէս իր պատրաստած վիճակագրութեան վրայ՝ անտեսելով «անկողմնակալ» մարդահամար անցկացնելու մեծ տէրութիւնների կոչը:

1881ի ընթացքում բրիտանական դիւանագիտութիւնը միքանի ապարդիւն փորձեր է անում մեծ տէրութիւնների ուշադրութիւնը հրաւիրելու հայկական բարեփոխումների խնդրով սուլթանական կառավարութեանը նոր համատեղ բողոք ներկայացնելու հարցի վրայ[52]: Իվերջոյ, 1881 Սեպտեմբերի 15ին Պոլսում մեծ տէրութիւնների դեսպանների համատեղ խորհրդակցութեան ժամանակ գրաւոր նոտայով հանդէս գալու առաջարկը, ըստ էութեան, անորոշ ժամանակով յետաձգւում է, որոշւում է դրա փոխարէն սահմանափակուել բանաւոր հարցադրումներով[53]:

Հայկական Հարցում մեծ տէրութիւններին միասնական գործողութիւնների բերելուն ուղղուած Բրիտանիայի ջանքի ձախողումը մեծապէս պայմանաւորուած էր Ռուսական կայսրութիւնում տեղի ունեցող զարգացումներով: 1881 Մարտի 1(13)ին ցար Ալեքսանդր Բ.ի սպանութիւնից յետոյ նրան յաջորդած Ալեքսանդր Գ.ը վերանայում է իր հօր ազատական քաղաքականութիւնը՝ որդեգրելով ինչպէս ներքին, այնպէս էլ արտաքին ազգային-ազատագրական գաղափարների ու շարժումների նկատմամբ խիստ զգուշաւոր, եթէ ոչ թշնամական վերաբերմունք: Դրա հետեւանքով՝ ռուսական

[49] Բարձր Դռան պատասխանի բնագիրը տե՛ս Роленъ-Жекменъ, էջ 104-5:

[50] Նոյն, էջ 106:

[51] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ.529, թ. 111:

[52] Կիրակոսեան, *Բրիտանական դիւանագիտութիւնը եւ*, էջ 193-94:

[53] Նոյն, էջ 204: 1881-82ին Հայկական Հարցի շուրջ ընթացող դիւանագիտական գործընթացները դէպքերին ժամանակակից միջազգային իրաւունքի մասնագէտ Ռոլէն Ժեկմէնն անուանում էր «դիւանագիտական կատակերգութիւն» (Роленъ-Жекменъ, էջ 109):

դիւանագիտութիւնն առժամանակ կորցնում է հետաքրքրութիւնը հայկական բարեփոխումների նկատմամբ՝ թողնելով Բրիտանիային այս հարցում միայնակ[54]:

Իր հերթին, Բրիտանիան հրաժարւում է Հայկական Հարցում ինքնուրոյն՝ առանց բոլոր մեծ տէրութիւնների մասնակցութեան, օսմանեան կառավարութեան վրայ լուրջ ճնշում բանեցնելուց: Ինչպէս նշում է Լէօն. *«Գլադստոնը, վերցնելով Կիպրոսը, դէն էր շպրտում Կիպրոսի դաշնագրութիւնը: ...Նա Անգլիայի վրայից վերցնում էր յատուկ պատասխանատւութիւնը Փոքր Ասիան ռեֆորմներով բարեկարգելու վերաբերմամբ եւ դարձնում էր Անգլիան սոսկ մէկն այն վեց տէրութիւններից, որոնք ստորագրել էին Բեռլինի դաշնագիրը, ... քրիստոնեաների փրկութիւնը ձգելով բոլոր վեց պետութիւններին, այսինքն՝ ոչ որի»*[55]:

Հայկական Հարցի նկատմամբ Բրիտանիայի հետաքրքրութեան թուլացման գործում դեր է խաղում նաեւ 1882ի ամռան-աշնան ամիսներին այդ երկրի կողմից Եգիպտոսի գրաւումը[56]: Կիպրոսում եւ Եգիպտոսում ռազմական ներկայութեամբ Բրիտանիան կարողանում է իր համար ապահովել Հնդկաստան տանող երթուղու վերահսկման կենսական հանգրուան, որը կախուած չէր Օսմանեան կայսրութեան բարիկամեցողութիւնից, ինչը յանգեցնում է Բրիտանիայի ռազմավարական շահերի տեսանկիւնից Օսմանեան կայսրութեան՝ որպէս Ռուսաստանի կայսերապաշտական նկրտումների համար պատնէշի նշանակութեան նուազմանը[57]: Նա այլեւս մեծ շահագրգռութիւն չունէր Օսմանեան կայսրութեան այլ շրջաններում, յատկապէս՝ ռուս–թուրքական սահմանակից Արեւմտեան Հայաստանի տարածքում սեփական դիրքերի ամրապնդման հարցում:

---

[54] Robert F. Zeidner, “Britain and the Launching of the Armenian Question,” *International Journal of Middle East Studies,* 7(4):1976, էջ 475. հմմտ.՝ J.A.R. Marriott, *The Eastern Question. An Historical Study in European Diplomacy*, Clarendon Press, Oxford, 1940, էջ 398-99: Ալեքսանդր Գ.ի օրօք հայերի եւ Հայկական Հարցի նկատմամբ ռուսական քաղաքականութեան մասին մանրամասն տե՛ս՝ Stephen Badalyan-Riegg, *Russia's Entangled Embrace: The Tsarist Empire and the Armenians, 1801-1914*, Cornell University Press, Ithaca and London, 2020, էջ 162-98: 1879-80ին Հայկական Հարցում օսմանեան իշխանութիւնների վրայ ճնշում գործադրելու՝ Բրիտանիայի ջանքերի նկատմամբ ռուսական դիւանագիտութեան վերապահ վերաբերմունքի մասին տե՛ս՝ В. Г. Тунян, *Россия и Армянский вопрос* [Վ. Գ. Թունեան, Ռուսաստանը եւ Հայկական հարցը], Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտ, Երեւան, 1998, էջ 97-105):

[55] Լէօ, *Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը*, *հտր. Ա,* էջ 122:

[56] Զ. Կիրակոսեան, *Բուրժուական դիւանագիտութիւնը եւ Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.)*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1980, էջ 144:

[57] William Hale, *Turkish Foreign Policy 1774-2000*, Frank Cass Publishers, London-Portland, Oregon, 2002, էջ 30:

Սրանից ելնելով, ստեղծուելուց երեքուկէս տարի անց՝ 1882 Հոկտեմբերին բրիտանական կառավարութիւնը վերացնում է «Քուրդիստանի» եւ «Անատոլիայի» զինուորական հիւպատոսների եւ փոխհիւպատոսների համակարգը, իսկ Ուիլսընը եւ զինուորական փոխհիւպատոսների մեծ մասը Փոքր Ասիայից փոխադրւում են Բրիտանիայի վերահսկողութեան տակ անցած Եգիպտոս[58]: Վիճակագրական տուեալների հաւաքման եւ մշակման ուղղութեամբ Թրոտըրի եւ Ուիլսընի աշխատանքները յետագայ ընթացք չեն ունենում: Նրանց թէեւ յաջողւում է մէկտեղել տարբեր վիճակագրական տուեալներ եւ դրանց հիման վրայ համեմատական աղիւսակներ կազմել, սակայն «արեւելեան վիլայէթներում» առկայ յաճախ իրարամերժ տուեալները ստուգելու նպատակով փորձնական մարդահամար անցկացնելու գաղափարն այդպէս էլ մնում է թղթի վրայ:

1881-84՝ Պոլսում Բրիտանիայի դեսպան լորդ Դաֆերինը գնդապետ Ուիլսընին ուղղուած հրաժեշտի նամակում (1882 Օգոստոսի 28) հետեւեալ գնահատականն է տալիս նրա եւ այլ զինուորական հիւպատոսների ու փոխհիւպատոսների՝ Արեւմտեան Հայաստանի եւ Փոքր Ասիայի տարածքում կատարած աշխատանքներին. *«Երկրի նիւթական եւ ֆիզիկական յատկանիշերի, նաեւ նրա բնակիչների վիճակի վերաբերեալ այն տեղեկատուութիւնը, որը Դուք տրամադրել էք Նորին Մեծութիւն Կառավարութեանը, չափազանց արժէքաւոր է: Անատոլիայի աւելի ամբողջական եւ սպառիչ քննութիւն, քան ձեր եւ ձեր գործընկերների կողմից արուածը՝ հաւանաբար երբեք չի իրականացուել Արեւելքի որեւէ մասում»*[59]:

